8197	- առանց վարչական մասի միջոցների տարեկանից ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի (տող 1-ի դրույթով)		106 934, 10	X	106 934, 10	X	106 934, 10	X	106 934, 10	X	106 934, 10
8198	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի տարեկանից ազատ մնացորդ՝ հաշվետվող տարվա հունվարի 1-ի դրությամբ	9331	106 934, 10	X	106 934, 10	X	106 934, 10	X	106 934, 10	X	106 934, 10
8199	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի տարեկանից ազատ մնացորդ՝ ձևավորված բացառապես նախորդ տարվա համայնքի բյուջեի ֆոնդային	9332	0,00	X	0,00	X	0,00	X	0,00	X	0,00
8200	- վարչական մասի միջոցների տարեկանից ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը (տող 8193)		0,00	X	0,00	X	0,00	X	0,00	X	0,00
8201	2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս		X	X	X	X	X	X	0,00	0,00	0,00
8202	2.5. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ		0,00	X	0	X	0,00	X	0	0,00	0,00
8203	2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում (տող 8000- տող 8110 - տող 8161 - տող 8170- տող 1.2.2. Փոխադրություններ (տող 8341+տող 8350))		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	-5 685 460,70	-8 601,10
8340			0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
	դրից՝										
8341	- փոխադրությունների ստացում	9122	0,00	0,00	X	0,00	0,00	0,00	X	0,00	X
8350	- ստացված փոխադրությունների գումարի մնացում	6122	0,00	0,00	X	0,00	0,00	0,00	X	0,00	X



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 15

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
82-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն Քասախ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը
2017թվականի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ՝
համաձայն հավելվածի:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

3. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ



Հավելված
Քասախ համայնքի ավագանու
2018թվականի փետրվարի 28-ի
N 15 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔ

**ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2018 թվականի փետրվարի 14-ին Կոտայքի մարզի Քասախ համայնքում տեղի ունեցավ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի (այսուհետ՝ ՀՀԾ) իրականացման 2017թվականի տարեկան հաշվետվության քննարկման հանրային բաց լսումները:

Հանրային բաց լսումներին ներկա էին համայնքի ղեկավարը, համայնքի աշխատակազմը, ավագանու անդամները, համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակազմները, համայնքի ազգաբանակցությունը:

Բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Արա Մկրտչյանը, մասնավորապես նշելով, որ հանրային բաց լսումների նպատակն է 2017թվականին ՀՀԾ-ի իրականացման ընթացքի մասին համայնքի ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկումն է, ինչպես նաև նրանց կարծիքների հավաքումն ու դրանց հիման վրա ՀՀԾ-ի հետագա տարիների ծրագրերի, ծառայությունների ու միջոցառումների վերանայման աշխատանքների իրականացումն է:

ՕՐԱԿԱՐԳԸ

- 1) Համայնքի տեսլականի սահմանում
- 2) Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում
- 3) Համայնքում իրականացված ոլորտային ծրագրերի և ՀՀԾ-ի հիմնական նպատակների ներկայացում
- 4) Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում և գնահատում

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ,

Քասախ համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները՝ նախադպրոցական և արտադպրոցական կրթություն և դաստիարակություն, մշակութային, սպորտային ծառայություններ և այլն:

7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	61
9.	Փախստականներ	180
10.	Գործազուրկներ	1817
11.	Զբաղվածներ	3339
12.	Հաշմանդամներ, այդ թվում՝ Մանկուց հաշմանդամներ	114 7
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	215
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	8
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝ Անօթևան ընտանիքներ	42 0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	184
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	42
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	125

Համայնքն ունի 1867 տնային տնտեսություն: Վերջին տարիներին նկատվում է ծնելիության աճ:

2.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Քասախ համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 11 անդամներով: Քասախ համայնքի աշխատակազմը բաղկացած է 13 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը հիմնանորոգվել է 2007 թվականին: Այն գտնվում է Քասախ համայնքի սկզբնամասում: Աշխատակազմի աշխատանքի կատարման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, կահույքը նորացված է հիմնականում 2007 թվականին համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, որը լիովին բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Սակայն այս ամենով հանդերձ անհրաժեշտություն է առաջացել համայնքապետարանում ստեղծել «Մեկ պատուհանի» սկզբունքը, ինչպես նաև դահլիճի հատակը վերանորոգման և տեխնիկայով ու գույքով կահավորման կարիք ունի, քանի որ ըստ «Տեղական ինքնակառավարման» ՀՀ օրենքի պահանջի համայնքի ավագանու նիստերը պետք է հեռառձակվեն ուղղիղ եթերով: Դահլիճում կանցկացվեն նաև հանրային մեծ քննարկումներ և այլ կարևոր հանդիպումներ:

2017 թվականին Քասախի համայնքապետարանի աշխատակազմը կազմված է եղել 13 աշխատակցով:

Համայնքի ենթակառուցվածքներն են՝

- ✓ Քասախ համայնքի «Արվեստոմշակույթային դպրոց-ստուդիա» ՀՈԱԿ - 30 աշխատակից
 - ✓ Քասախ համայնքի «Արուսյակ» -մանկապարտեզ ՀՈԱԿ- 23 աշխատակից
 - ✓ Քասախի ԿԲՍ գրասենյակ հիմնարկ-10 աշխատակից
- Քասախի համայնքապետարանի և նրա ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 76 հոգուց

3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ և ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

3.1 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քասախ համայնքը 2017թվականին տրվել է 35 շինարարության թույլտվություն, սա վկայում է այն մասին, որ համայնքը միշտ զարգացման ընթացքում է: 2017 թվականին ավարտին հանձնվեց համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի կազմումը, որի համար ծախսվել է 3850.0 հազ. դրամ, որի արդյունքում ինչպես նաև համայնքն արդեն իսկ ունի քաղաքաշինական քարտեզ: 2004թվականից համայնքում գործում է Քասախի «Կոմունալ սպասարկման և բարեկարգման գրասենյակ» հիմնարկը, որն ունի 10 աշխատակից և շահույթ հետապնդող կազմերկայություն չի հնադիսանում: Այդ կազմակերպության միջոցով համայնքում շաբաթական երեք անգամ իրականացվում է աղբահանության աշխատանքներ, մաքրվում են համայնքի փողոցները: 2017թվականին համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման նպատակով ծախսվել է շուրջ 11.171.700 դրամ: Քասախ համայնքի ավագանու 2017թվականի հուլիսի 3-ի N 35-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի վարչական տարածքից ոչ կենցաղային և խոշոր եզրաչափերի աղբի հավաքման և տեղափոխման թույլտվության տրամադրման պայմանների և աղբահանության վճար վճարողների հաշվառման» կարգը, համաձայն որի 2017 թվականի ընթացքում համայնքի բնակիչների և համայնքի տարածքում գործող 34 կազմակերպությունների հետ կնքվել է աղբահանության պայմանագրեր: Համայնքում առկա է ջրմուղու 8 կմ, կոյուղու 3 կմ, ջեռուցման 5 կմ ցանցեր, իսկ ոռոգման ջուրը մատակարարվում է 10 կմ կիսախողովակային, 32 կմ փակ և մոտ 7-8 կմ հողային առունկի ցանցով: Չնայած այսքանով հանդերձ ոռոգման համակարգում կորուստները կազմում են 65 %:

2017թվականի իրականացվել է 3 խոշոր ներդրումային ծրագիր՝

1. Կառուցվել է շուրջ 3900 մետր երկարությամբ խմելու ջրագիծ, որի նախահաշվային արժեքը կազմել է 13.628.000 դրամ
2. Էներգիանայողական ծրագիր-համաձայն որի համայնքապետարանի և երկու ենթակա հիմնարկներում տեղադրվել է 250լիտր տարողությամբ, իսկ 15 բնակիչների անհատական բնակերի տներում տեղադրվել է 300 լիտր տարողությամբ արևային ջրատաքացուցիչներ: Նույն ծրագրի շրջանակներում տեղադրվել է 2 հատ- 3 կՎՏ, 2 հատ- 5 կՎՏ, 2 հատ-10 կՎՏ արևային ֆոտոէլեկտրական համակարգեր և որ

ամենակարևորն է համայնքի կենտրոնական մասի 138 հատ 250 ՎՏ-ոց փողոցային լուսատուներ փոխարինվել են 80 ՎՏ էներգիախնայողական լուսադիոդային լուսատուներով, որի օգտագործման արդյունքում համայնքի գիշերային լուսավորության ժամանակահատվածը երկարացվել է 4 ժամի փոխարեն 6 ժամով, իսկ մեկ դեկտեմբեր ամսում ծախսվել է շուրջ 100.000 դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Էներգիախնայողական ծրագրի վերջնական արժեքը կազմել է 50.984.100 դրամ:

3. Կոտայքի մարզպետարանի միջոցներով համայնքի նորակառույց թաղամասում՝ Խաչանով խողոցից միջև Վարդանանց փողոց կառուցվել է շուրջ 980 գծմ երկարությամբ գազատար խողովակ, որի համար ծախսվել է շուրջ 17.121.690 դրամ:

2017թվականին կատարվել է 900.0 հազար դրամի կոյուղագծերի մաքրման աշխատանքներ: Համայնքն ունի 2 գերեզմանատուն յուրաքանչյուր ընտանիքին բաժին է ընկնում միջինը 12-15 քմ գերեզմանահող:

Համայնքն ունի 2 գերեզմանատուն:

3.2 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում կա 16 հատ 4, 5 հատ 5 հարկանի, 2 հատ 2 հարկանի բազմաբնակարան շենքեր և 928 բնակարաններ: 2 հարկանի շենքեր, 50 քրթեջատիպ մեկ հարկանի բնակարաններ, 204.0 քմ տարածքով բազմաբնակարան շենքեր: 2017 թվականին շահագործման են հանձնվել 13 առանձնատուն և դրանց ընդհանուր թիվը կազմում է շուրջ 274: Համայնքում կա մոտ 156 ավտոտնակ՝ միջինը 25-70 քմ:

3.3 ՀՈՂՕՏԱԳՈՐԾՈՒՄ

2017թվականի հուլիսի 1-ի դրությամբ համայնքի հողային տարածքը կազմում է 1212.21 հա, որից

- ❖ Վարելահող-358.48հա
- ❖ Խոտհարք-12.57 հա
- ❖ Արոտավայրեր-210.59 հա
- ❖ Բազմամյա տնկարկներ – 50.9հա
- ❖ Բնակավայրերի հողեր -238.8հա
- ❖ Զրային ֆոնդի հողեր – 1.37հա
- ❖ Այլ հողեր – 150.14հա
- ❖ Արդյունաբերական հողեր-2.43հա
- ❖ Գյուղ արտադրական հողեր-11.23հա
- ❖ Էներգետիկայի, կապի տրանսպ. կոմունալ ենթ. հողեր-9.11 հա

Հողերի սեփականաշնորհմանը մասնակցել է 1834 ընտանիք, մեկ հողաբաժնի չափը կազմել է 0.24 հա, բնակավայրի տարածքը կազմում է 225.66 հա:

3.4 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քասախ համայնքում գյուղացիական տնտեսությունները զբաղված են դաշտավարությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ, ընդհանրապես գյուղատնտեսության բնագավառում զբաղված է համայնքի բնակչության 31 %-ը: Համայնքում 2018թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա է 633 խոշոր եղջրավոր անասուններ, որից կովեր՝ 251 գլուխ, 178 գլուխ խոզեր, 1095 գլուխ ոչխարներ և 1773գլուխ թռչուններ և 84 հատ մեղվաընտանիք: Համայնքի գյուղացիական տնտեսությունները զբաղված են խաղողի, ցորենի, գարու, բազմամյա խոտաբույսերի, ինչպես նաև բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրությամբ:

Ընդահուր առմամբ համայնքում 2017թվականին արտադրվել է

հացահատիկ- 609 ցենտներ-29 հա

կարտոֆիլ – 270ցենտներ-1 հա

բանջարեղեն –1325ցենտներ-5 հա

պտուղ – հատապտուղ – 7026ցենտներ-46.7հա

խաղող-332.4ց-4.11 հա

կուտակվել է խոտ – 4200ցենտներ

կուտակվել է ծղոտ – 600 ցենտներ

ցանվել է աշնանացան-29 հա, որից՝

հացահատիկային մշակաբույսեր-24 հա

կերային մշակաբույսեր-5 հա

Հողերը համարվում են ոռոգովի հողատարածություններ: Համայնքում արտավայրերը մեծամասամբ գտնվում են դարավանդների վրա: Դաշտամիջյան ճանապարհները, որոնք համայնքում կազմում են 40-50 կմ, որից 20 կմ ասֆալտապատ են: Գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար համայնքում առկա է 7 տրակտոր, 11 բեռնատար-ավտոմեքենաներ, 6 կցասայլեր, 2 տրակտորային խոտինձիչներ, 2 մամլիչ-բարդոձիչներ, 2 գութան, 2 շարքացան, սակայն ողջ տեխնիկան համայնքին մնացել է դեռևս խորհրդային ժամանակաշրջանից, որն էլ և՛ ֆիզիկապես, և՛ բարոյապես մաշվել է:

3.5 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Չնայած համայնքում աղբահանության գործընթացն իրականացվում է շաբաթական 3 անգամ վարձակալած տրանսպորտի միջոցով, սակայն արդեն ժամանակն է ունենալ սեփական աղբափոխադրիչ տրանսպորտ: Համայնքում ոռոգման ջուրը մատակարարվում է 10 կմ կիսախողովակային, 32 կմ փակ և մոտ 7-8 կմ հողային առունկի ցանցով: Համայնքում չկան անտառապատ տարածքներ, ջրավազաններ և հատուկ պահպանվող տարածքներ: Համայնքն ունի զբոսայգի և երեխաների համար նախատեսված խաղահրապարակ: Զբոսայգում և շրջակա տարածքում կատարվել է շուրջ 150.0 հազ. դրամի կանաչապատման աշխատանքներ:

3.6 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2017թվականին կատարվել է 4.021,3 հազար դրամի ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ: 2017թվականին հունվարի 1-ի դրությամբ ասֆալտապատման աշխատանքների մասով համայնքի պարտքը կազմում էր շուրջ 19.239,2 հազ. դրամ: Բանակցային աշխատանքներ են տարվում կառավարության հետ դեպի համայնք մտնող շուրջ 800 մետր ճանապարհի վերանորոգման համար, որի նախահաշվային արժեքը կազմում է շուրջ 86.000 մլն դրամ:

3.7 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քասախ համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի խանութներ, հացի փոեր, հանրային սննդի սպասարկման օբյեկտներ, հյուրանոցներ, դարբնոցներ և այլն:

Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

ԱղՅՈՒՍԱԿ 2.

**ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՌ 01.01.2018Թ ԴՐՈՒԹՅԱՄԲ**

Արտադրական կազմակերպություն ներ	Առևտրային կազմակերպություններ	Ծառայություններ մատուցող կազմակերպություններ
---------------------------------------	----------------------------------	---

✓ «Տիգրան Մարկոսյան» Ա/Ձ դարբնոց ✓ «Արթուր Բագրատյան» Ա/Ձ, դարբնոց ✓ «Գրիշա Հարությունյան» Ա/Ձ հացի և լավաշի թխման արտադրամաս ✓ «Աստղաբույլ» ՍՊԸ, խմորեղենի արտադրամաս ✓ «Կառուցող» ՍՊԸ քարի արտադրամաս	✓ 16 (տասնվեց) սննդի և տնտեսական ապրանքների խանութներ ✓ 1 (մեկ) մսամթերքի վաճառակետ ✓ 1 (մեկ) տեխնիկական հեղուկների, քսայուղերի վաճառակետ ✓ 1 (մեկ) դեղատուն ✓ 2 հեղուկ վառելիքի վաճառքի բենզալցակայան ✓ 1(մեկ) գյուղատնտեսական դեղորայքի (թունաքիմիկատներ, բուժանյութեր, անասանունի բուժման համար նախատեսված դեղեր, պարարտանյութեր) վաճառքի խանութ ✓ 2 (երկու) շինարարական ապրանքների վաճառքի խանութներ ✓ 3 (երեք) հագուստի վաճառքի խանութներ ✓ 1 (մեկ) մսի վաճառքի խանութ	✓ 2 (երկու) հյուրանոց ✓ 2 (երեք) հանրային սնունդ սպասարկող օբյեկտներ ✓ 2 (երկու) վարսավիրանոց ✓ 1 (մեկ) սրճարան ✓ 1 (մեկ) կարի արհեստանոց ✓ 2 (երկու) ատամնաբուժարան
---	---	---

Առևտրի և սպասարկման ոլորտներում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 120 մարդ:

3.8 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի մեկ նախադպրոցական հաստատություն, որի հզորությունը նախատեսված է 300 երեխաների համար, սակայն 2017թվականին մսուր մանկապարտեզ են հաճախել շուրջ 154 երեխա՝ 5 խումբ, որոնց սպասարկում են 23-աշխատողներ՝ 10 մանկավարժ և 13 սպասարկող անձնակազմ: 2016թվականին շարունակվում է "Կրթական" ծրագրերի իրականացման գրասենյակի միջոցներով վերանորոգված մանկապարտեզի մեկ սենյակում նախակրթարանի գործունեությունը և 2017թվականին այդ ծրագրի գործունեության համար համայնքի բյուջեից ծախսվել է շուրջ 2.061,5 հազար դրամ: 2016թվականին համայնքը նախադպրոցական հաստատությանը սուբսիդավորել է 39400,0 մլն դրամ: 2017թվականի համայնքի կողմից 1-ին դասարան հաճախող 91 երեխաներին նվիրել է պայուսակներ, իրենց գրենական պիտույքներով, իսկ ամանորին արդեն իսկ ավանդույթ դարձած շուրջ 650 նվերներ

“Մշակույթի կենտրոնի կողմից կազմակերպված միջոցառման ժամանակ բաժանվել է 1-3 դասարանի և մանկապարտեզի երեխաներին:

Համայնքն ունի երկու միջնակարգ դպրոց, որտեղ 2017թվականին սովորել են 784 երեխա, որը 2016թվականի դրությամբ աճել է 10,4%-ով, աշխատում են 69 ուսուցիչներ և 27 սպասարկող անձնակազմ: Համայնքի 2 դպրոցներն էլ գտնվում են վերանորոգված վիճակում:

3.9 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քասախ համայնքում հիմնովին վերանորոգված շենքում գործում է «Արվեստամշակութային դպրոց-ստուդիա» ՀՈԱԿ-ը, որը կազմավերվել է «Մշակույթի կենտրոնի» ՀՈԱԿ-ի և «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի միավորումից, որտեղ կենտրոնացված են մշակույթի և արվեստի բոլոր բնագավառները: Դպրոցում գործում են ձեռարվեստի, կարատեի, ժողովրդական պարի և երգի, մարմնամարզության, օտար լեզուների, ասմունքի, դերասանական և այլ խմբակներ, դաշնամուրի, ժողովրդական գործքիների բնագավառում: Այստեղ սովորում են շուրջ 277 երեխա, որոնց սպասարկում են 33 աշխատակիցներ: Այստեղ տարվա ընթացքում կազմակերպվում է շուրջ 13-15 միջոցառումներ նվիրված միջազգային, հանրապետական և համայնքային բոլոր տոներին: Դպրոցի սաները 2017թվականին մասնակցել են բազմաթիվ մարզային, հանրապետական մրցույթ փառատոններին՝ զբաղեցնելով 1-2 տեղը: Մշակույթի կենտրոնում է գտնվում նաև համայնքի գրադարանը, որտեղ կա շուրջ 7000 կտոր գրականություն և 2017թվականին ունեցել է 382 ընթերցող: Համայնքն ունի www.kasakh.am ինտերնետային վեբ կայքը, որտեղ տեղ է գտնում համայնքային նորությունները, համայնքում իրականացվող բոլոր միջոցառումները, համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումները, կարգադրությունները, համայնքի բյուջեի ծախսային և եկամտային մասերը և դրանց տնօրինումն ըստ կատարման ժամկետների, ինչպես նաև հայտարարություններ: Քասախ համայնքում է գործում երկրապահ կամավորական միության (ԵԿՄ) տարածքային բաժանմունքը, որտեղ ընդգրկված են 200 կամավորականներ:

3.10 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, որտեղ աշխատում են 2018թվականի հունվարի 1-ի դրությամբ աշխատում է 3 բժիշկ և 3 բուժքույր, սպասարկող անձնակազմ 5, իսկ այցելուների թիվը 2017թվականի ընթացքում կազմում է 10858 մարդ, 2017թվականի ընթացքում համայնքում ծնվել է 68 երեխա, շենքը ամբողջովին վերանորոգված է: Համայնքում գործում է նաև ՀՀ ԱՆ «Ներդնների Կլինիկա» ՓԲԸ-ն, 2016-2017թվականի ընթացքում շենքը մասնակի վերանորոգվել է բարերարների ներդրումների շնորհիվ, իսկ բակը ասֆալտապատվել է Քասախ համայնքի միջոցներով: Համայնքում գործում է նաև 2 ատամնաբուժարաններ և դեղատուն: Համայնքի սպորտային ոլորտը զարգացած է հատկապես «Կիոկուշինկա» կառատեի և ծանրամարտի սպորտաձևով: Համայնքում գործում է ծանրամար-

տի սպորտ դպրոց, որի շենքային պայմանները նույնպես գտնվում են գերազանց վիճակում: Համայնքի կենտրոնում է գտնվում մոտ 13210 քմ ընդհանուր մակերեսով ֆուտբոլի դաշտը, որի 7500 քմ կազմում է խաղահրապարակը և իր չափերով հանրապետությունում զբաղեցնում է 3 տեղը և հիմնովին վերանորոգման կարիք ունի: Քասախ համայնքի զարգացման ծրագրով նախատեսվում է գալիք 5 տարիների ընթացքում պետական և մասնավոր ներդրումների միջոցներով համայնքում ստեղծել մարզահամալիր և Քասախի մանկապատանեկան ֆուտբոլի ակադեմիա:

3.11 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶՐՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքն ունի 5 հա տարածքով զբոսայգի, որտեղ կառուցված է Հայրենական մեծ պատերազմի զոհվածների հուշարձան-կոթողը և հանդիսությունների սրահ: Վերջինս միջև 2022 թվականի ավարտը նախատեսվում է վերակառուցել հայ առաքելական եկեղեցու: Տարածքը ամբողջովին ծառապատված է և 2015թվականի ապրիլի 20-ին զբոսայգում տեղադրվեցին Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված 2 խաչքարեր:

3.12 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկան աշխատանքի և սոցիալական ծառայության գործակալություններ: Բնակիչները հիմնականում աշխատանք են փնտրում Երևան քաղաքում, իսկ սոցիալական ծառայությունը գտնվում է Եղվարդ քաղաքում, որը համայնքից հեռու է 22կմ, որը բնակիչների համար դժվարություններ է ստեղծվում այնտեղ հասնելու համար: Համայնքում նպաստ ստացող ընտանիքների թիվը 2017թվականին կազմում է 215 ընտանիք: 2017թվականին համայնքի սոցիալապես անապահով շուրջ 100-ից ավել ընտանիքների տրամադրվել է 2100.0 մլն դրամի դրամական օգնություն:

3.13 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Քասախ համայնքի բնակչությունը մասնակցում է տեղական ինքնակառավարման աշխատանքներին: Համայնքում կատարվող յուրաքանչյուր խոշոր ներդրում, ինչպես նաև համայնքի զարգացման ծրագրերը, համայնքի բյուջեի կատարողականը, քաղաքաշինական ծրագրերը կյանքի կոչելուց առաջ համայնքում կատարվել է հանրային բաց լսումներ և հաշվի են առնվել համայնքի բնակչության կարծիքը, 2017թվականին կատարվել են 3 հանրային քննարկումներ: Բացի դրանից համայնքի www.kasakh.am վեբ կայքի, ինչպես նաև համայնքում տեղադրված հայտարարությունների ցուցատախտակների և արդեն 2016թվականից sms հարցումների միջոցով բնակչությանն իրազեկվում է համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կայացրած

որոշումները, համայնքի առաջնահերթ խնդիրներից ըստ բնակիչների որոնք են կարևոր: Համայնքի բնակչությանը բջջային sms-ի միջոցով ծանուցվում է նաև նրանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: 2017թվականին համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 334 որոշում, 35 կարգադրություն, համայնքի ավագանու կողմից գումարվել է 12 նիստ, որոնց ընթացքում կայացվել է 67 որոշում: Քասախ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N 47-Ն և 2015թվականի հոկտեմբերի 5-ի 44-Ն, 45-Ն որոշումներով հաստատվել է համապատասխանաբար «Քասախ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը», «Քասախ համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը», «Քասախ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության» կարգը, որով համայնքի բնակչությունը մասնակցում է համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման), համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների կատարման գործընթացներին: 2017թվականին գումարվել է Քասախ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի 2 նիստ:

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում 2015թվականի օգոստոսի 12-ին իրականացվել է շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության կազմակերպումը ուժեղ երկրշարժի դեպքում» թեմայով: Աղետների ռիսկերի կառավարման համար, Քասախ համայնքի ղեկավարի 2015 թվականի փետրվարի 24-ի N 28-ի որոշմամբ ստեղծվել է ՀՀ Կոտայքի մարզի Քասախ համայնքի բնակչության տարահանման պլան, որը երկողմանի հաստատվել է նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության կողմից:

Քասախ համայնքի ղեկավարի 2017թվականի փետրվարի 13-ի N33 որոշումով փոփոխվել և թարմացվել է Քասախ համայնքի «Քաղպաշտպանության պլանը»: 2017թվականին հաստատվել է նաև համայնքի դպրոցների և նախադպրոցական հաստատության քաղպաշտպանության պլան ժամանակացույցը:

3.15 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Քասախ համայնքը մինչ օրս համագործակցում է ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի, "Փրկենք երեխաներին" կազմակերպության Հայաստանյան գրասենյակի, իսկ 2015թվականից նաև "Կրթական" ծրագրերի իրականացման գրասենյակի

և մի շարք այլ համայնքային ներդրումներ իրականացնող ընկերությունների և կազմակերպությունների հետ, որոնք նպաստել են համայնքի զարգացմանը: 2017թվականին համայնքը սկսեց համագործակցել նաև «Ակբա կրեդիտ ագրիկոլ» բանկ ՓԲԸ-ի հետ համայնքում իրականացնելով էներգիախնայողական ծրագիր: Այդ համագործակցությունը շարունակական կլինին նաև 2018թվականին: 2017 թվականին համայնքը համագործակցել է նաև «Վերջին օրերի սրբերի բարեգութություններ կորպորացիայի Հայաստանյան ներկայացուցչության» հետ, համայնքում կառուցելով շուրջ 3900 մետր խմելու ջրագիծ և տեղադրվել է 3 ցայտադրյուններ: Համայնքում 2012թվականից սկսել է աստիճանաբար զարգանալ փոքր և միջին ձեռնարկությունները, որին շատ է օգնում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի Կոտայքի մարզային մասնաճյուղի կողմից իրականացվող տարաբնույթ դասընթացները, խորհրդատվությունները: 2017թվականի արդեն իսկ կառավարությանն է ներկայացվել համայնքում կատարվող ներդրումային ծրագրեր: Դրանցից են

1. Քասախ համայնքում էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիա կանկարից ինուլինի և պեկտինի ստացման համար գյուղատնտեսական ուսումնասիրտադրական կենտրոնի ստեղծում:
2. Համայնքապետարանում «Մեկ պատուհանի» սկզբունքի ներդրումը և խորհրդակցական դահլիճի վերանորոգումը և կահավորումը:
3. Համայնք մտնող գլխավոր ճանապահի կառուցումը
4. Համայնքի մարզադաշտի վերակառուցումը խոշոր մանկապատանեկան ֆուտբոլի ակադեմիայի:
5. Էներգիախնայողական ծրագիր շարունակականությունը:
6. Մասնավոր հատվածի ներդրումներով համայնքում ագրոտուրիզմի ստեղծումն ու զարգացումը:


3 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՈՐՏԵՂԻՑ Է ԳՈՅԱՑԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Համայնքի 2017թ. բյուջեի
փաստացի մուտքերը,


164403,8 հազար
դրամ

հազար դրամ




ԻՆՉՊԻՍԻՆ Է ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ

հազար դրամ




ԻՆՉՊԵՍ ԵՆ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

հազար դրամ



ՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԵՆ ԾԱԽՍՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հ/հ	ՈԼՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (ՀԱՋԱՐ ԴՐԱՄ)	ՏԵՍԱԿԱՐԱ Ր ԿՇԻՈՐԸ (%)
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	144918,6	100.0 %
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	37569,0	25,9 %
2.	Պաշտպանություն	0,0	0.0 %
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0,0	0.0 %
4.	Տնտեսական հարաբերություններ	-2168,8	-1,5%
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	5112,0	3,5 %
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	27077,2	18,7 %
7.	Առողջապահություն	0.0	0.0 %
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն	2478,6	1,7 %
9.	Կրթություն	72750,6	50,2 %
10.	Սոցիալական պաշտպանություն	2100,0	1,5 %
11.	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	1550,0	0.0 %
ԻՆՉ ՏԵՍԱԿԻ ԾԱԽՍԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ 2017թ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ			



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ



Ա. ՄԿՐՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 16

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի փետրվարի 20-ի N01/15.1/754-18 գրության, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Քասախ համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿԱՆ ԱՂԱՍԻ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

3. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

6. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱ ՄԿՐՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kaskakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով և իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 29-ի Քասախ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին N 18 որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 5-րդ բաժնի 5.1.1 կետին) ենթակետի 2-րդ պարբերությունը, «հաստատված նախագծերի» բառերից հետո, լրացնել «նոր շենքի տանիքի հարդարման երանգավորման նախապատվությունը տալ RGB 128-96-0 RAL 1011, RGB 54-76-80 RAL 7011 և RGB 120-136-125 RAL 7003 գունային երանգներին» բովանդակությամբ:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

3. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

6. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԱՅԻՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՍՏԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի նոյեմբերի 16-ին N 1708-Ն որոշման, ինչպես նաև 2017թվականի հուլիսի 27-ի N 910-Ն որոշման, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի՝ համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության 2018թվականի պետական բյուջեով սուբվենցիաների ստացման նպատակով ներկայացված ծրագրերին :
2. 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտերը սահմանված ժամկետում ներկայացնել համապատասխան լիազոր մարմին:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

3. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅՇԱՌ

6. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱ ՄԿՐՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքային սեփականություն համարվող հողի օտարումը և դրա մեկնարկային գինը՝ համաձայն հավելվածի

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

3. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

6. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՔԱՄԿՐՏՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ
Քասախ գյուղական համայնքի ավագանու 2018
թվականի փետրվարի 28-ի N 19 որոշում

h/h	ԾԱԾԿԱԳԻՐԸ	ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ Ը	ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ՄԱԿԵՐԵՍԸ	ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ
1	07-065-0104-0010	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	0.0450 հա	1119690 դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Ա. ՄԿՐՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 20-Ն

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 66-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է՝

Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի «Քասախ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 66-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

3. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

6. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԱ ՄԿՐՏՅԱՆ



Հավելված Քասախ
համայնքի ավագանու 2018 թվականի
փետրվարի 28 -ի N 20-Ն որոշման

Հավելված
Քասախ համայնքի ավագանու 2017
թվականի դեկտեմբերի 20 -ի N 66-Ն
որոշման

Ծրագիր	Հոդված	Հոդվածի անվանումը	28.02.2018թվ- ի դրությամբ	պակասեց ում /-/ կամ ավելացում /+/	ճշտված բյուջե
		Ընդամենը եկամուտներ	0,0	0,0	0,0
		Ծախսային մաս			
01-1-1	5113	ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	6000,0	+1500,0	7500,0
01-1-1	5121	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	12000,0	-5000,0	7000,0
01-1-1	5122	ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	4000,0	+3500,0	7500,0
09-1-1	4655	ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	250,0	+750,0	1000,0
09-1-1	4211	ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	0,0	+750,0	750,0
09-1-1	5113	ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	0,0	+10000,0	10000,0
09-1-1	5134	ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	0,0	+800,0	800,0
09-5-1	4211	ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	1250,0	-750,0	500,0
09-5-1	5113	ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	15000,0	-10000,0	5000,0
09-5-1	5134	ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	2000,0	-800,0	1200,0
11-1-2	4891	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (ՎԱՐՉ. ԲՅ.)	8600,0	-750,0	7850,0
		Ընդամենը ծախսեր	49100,0	0,0	49100,0
		Ընդամենը	49100,0	0,0	49100,0

Քասախ համայնքի ղեկավար



Ա. Մկրտչյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 21

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14³-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների (քնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 4 դրական եզրակացությունը, Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի թիվ 9 որոշմամբ՝

Քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-065-0149-0014 կադաստրային ծածկագրով 0.10365 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել քնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատեսքի:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

3. ՀԱԿՈՐՅԱՆ ՆՈՐԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

6. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱՄԿՐՏՉՅԱՆ

